ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» սեպտեմբերի 2015թ. **N---- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 597-րդ և 605-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի 18.06.2015թ. հաշվետվությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքից որպես նվիրատվություն ընդունել «Պաշարված Լենինգրադի երեխաները» հուշարձանը՝ 4 923 955 (չորս միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ինը հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ արժողությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌԴ Սանկտ-Պետերբուրգի նահանգապետի գլխավորած պատվիրակությունը Երևան կատարած այցի շրջանակներում ՌԴ հյուսիսային մայրաքաղաքի կողմից Երևան քաղաքին է նվիրաբերել հուշարձան: Հուշարձանը կրում է «Պաշարված Լենինգրադի երեխաները» անունը: Կառուցվել է Սանկտ-Պետերբուրգի նահանգապետ Գ.Ս.Պոլտավչենկոյի և Երևանի քաղաքապետ Տ.Ա.Մարգարյանի նախաձեռնությամբ՝ ի հիշատակ Լենինգրադի հերոսական սխրագործության և ի երախտագիտություն Հայաստանի բնակիչների, ովքեր ընդունել են պաշարված քաղաքից տարհանված երեխաներին: Հուշարձանը տեղադրվել է Արաբկիր վարչական շրջանում, որի բացման պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել 2015թ. ապրիլի 30-ին:

Համաձայն Երևանի քաղաքապետարանի և «Արթին էնթրփրայս» ՍՊԸ-ի միջև 04.12.2014թ. կնքված N ԵՔ-ՊԸԾՁԲ-15/4 պայմանագրի՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Հ.Անտոնյանը դիմել է կատարողին գույքի գնահատման պահանջով: Ըստ «Արթին էնթրփրայս» ՍՊԸ-ից ստացված հաշվետվության՝ հուշարձանի շուկայական արժեքը 18.06.2015թ. դրությամբ կազմում է 4 923 955 (չորս միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ինը հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ:

Գույքը՝ որպես հիմնական միջոց անհրաժեշտ է վերոնշյալ արժեքով հաշվառել Երևանի քաղաքապետարանի (Արաբկիր վարչական շրջանի) հաշվապահական հաշվեկշռում՝ համապատասխան հաշվով:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ